07.10.24 - 11.10.24
09:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
Երևանի պետական համալսարան

Ս.թ. հոկտեմբերի 7-11-ը Երևանի պետական համալսարանում կանցկացվի ԵՊՀ ՈՒԳԸ միջազգային երիտասարդական 10-րդ գիտաժողովը՝ նվիրված ԵՊՀ հիմնադրման 105-ամյակին։

Հոկտեմբերի 7-ին՝ 12:30-ին, կմեկնարկի մասնակիցների գրանցումը։

Նույն օրը՝ 13:30-ին, ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում տեղի կունենա ԵՊՀ ՈՒԳԸ միջազգային երիտասարդական 10-րդ գիտաժողովի բացման հանդիսավոր արարողությունը։ Ողջույնի խոսքով հանդես կգան ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը և Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի տնօրեն Վահագն Վարագյանը, ԵՊՀ ՈՒԳԸ նախագահ Սիրանուշ Բաղումյանը, հրավիրյալ գործընկերները։

Գիտաժողովն ուսանողներին, ասպիրանտներին և երիտասարդ գիտնականներին հնարավորություն է ընձեռում ակադեմիական լսարանին ներկայացնելու իրենց գիտական հետազոտության արդյունքները, կատարելագործելու գիտական աշխատանք կատարելու հմտությունները, ինչպես նաև կապեր հաստատելու Հայաստանի և արտերկրի երիտասարդ հետազոտողների հետ։

Հայտի լրացման մանրամասները՝ այստեղ։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am